# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**30 մարտի 2021 թվականի N 140 - Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՆԱԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԼԻԱՐԺԵՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 5-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2021 թվականի մարտի 25-ի N ԱԱ/04/5896-2021 գրությունը.

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. Հաստատել՝

1) կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացը, այդ թվում նաև հանրային իրազեկման աշխատանքները լիարժեք կազմակերպելու և իրականացնելու համար մարզպետին կից հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) ՀՀ Սյունիքի մարզում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացների համակարգման միջոցառումների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

31 03 2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021թ. մարտի 30
ք. Կապան

Հավելված N 1
Սյունիքի մարզպետի
2020 թվականի մարտի 30-ի
N 140-Կ որոշման

# Կ Ա Զ Մ

**Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացը, այդ թվում նաև հանրային իրազեկման աշխատանքները լիարժեք կազմակերպելու և իրականացնելու համար մարզպետին կից համակարգող հանձնաժողովի**

1. ՀՀ Սյունիքի մարզպետի առողջապահության ոլորտը համակարգող տեղակալ տեղակալ – հանձնաժողովի նախագահ
2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության առողջապահության բաժնի պետ
4. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Սյունիք» մասնաճյուղի տնօրեն (համաձայնությամբ)
5. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Սյունիք» մասնաճյուղի էպիդեմիոլոգ (համաձայնությամբ)
6. «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական գծով փոխտնօրեն
7. «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական գծով փոխտնօրեն
8. «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական գծով փոխտնօրեն
9. «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական գծով փոխտնօրեն
10. «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական գծով փոխտնօրեն
11. «Նորաշենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
12. «Տաթևի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
13. «Վերիշենի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ի տնօրեն
14. «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
15. «Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
16. «Խնձորեսկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
17. «Դարբասի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
18. «Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ի տնօրեն
19. «Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
20. «Բռնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
21. «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի իմունիզացիայի պատասխանատու

22. «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի իմունիզացիայի պատասխանատու
23. «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի իմունիզացիայի պատասխանատու
24. «Քաջարանի  բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի իմունիզացիայի պատասխանատու
25. «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի իմունիզացիայի պատասխանատու:

3/31/2021

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано  MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան

Հավելված N 2
Սյունիքի մարզպետի
2021 թվականի մարտի 30-ի N 140-Ա որոշման

**ՑԱՆԿ**

**Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացները համակարգման միջոցառումների**

1. COVID-19-ի դեմ պատվաստումների ներդրման միջոցառումներ, միկրոպլանավորում և հաշվետվությունների պարբերաբար ներկայացում մարզպետին և Առողջապահության նախարարություն,
2. COVID-19-ի դեմ պատվաստումների գործընթացի մշտադիտարկում, ամենօրյա քննարկումներ, առկա խնդիրների բացահայտում և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում,
3. Հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի մշտադիտարկում և արագ արձագանքում,
4. Բուժաշխատողների համար խորհրդակցությունների կազմակերպում և իրականացում,
5. Տեղական ԶԼՄ-ների միջոցով հանրային իրազեկման աշխատանքների կազմակերպում և իրականացում:

3/31/2021

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան